

կար զբոքեամբս, և ի սրտէ մաղքելով վասն մեր զեր-
կար կեանս և, զբարօրութիւն,

Մեամ

Արժանապատիւ Տեարք իմ, Արրուրեան Զերում,
Ամենախոնարն ծառայ
ԳՐԵԳՈՐ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ:

ԴԱՐ Պ. Յ. ՅՈՎՀԱՆՆԵԱՆԻ Ի ՀԱՅՐԵՆԻՑ.

Այս անգամ այ մեր Աղաւնին մասնաւոր ուրախու-
թեամբ մը իր բոհչը պիտի առնու, վասն զի դարձեալ
ազգերնուս տալու բերկրառոք աւետիս ունի : Պ. Յով-
հաննես Յովհաննեան մեր ազնի, բարեկամը, իր բժշկա-
կան ուսմանց ընթացքը փառաւորապէս լմշնցընելով,
յունիսի 15ին ճամբար եղաւ Փարիզէն ի ծոց նայրե-
նեաց դառնայու :

Պ. Յովհաննեան Զմիւռնացի և եւ պատուաւոր ըն-
տանեաց զաւակ : Քսան եւ չորս տարեկան եղած
ժամանակը Կոստանդնուպոլիս գնացէր, Երամեան
Մեծապատիւ Գերդաստանին մէջ շատ տարի կեցէր
ու 1850ին Փարիզ եկէր և բժշկութիւն սովորելու : Վեց
տարի միակերպ մոտադիւր ջանրով իր սիրելի արուես-
տին պարապելէն յետոյ, մասնաւոր պարագաներու
պատճառաւ յաս, սեղեց ինքն այ ազգանոց շասերուն
պէս երրայ իտալիոյ Փիզա քաղաքին նոշականոր
բժշկութեան դպրոցին վարժապետաց առջեւն խր
քննութիւնը անցընել : Անցեալ տարի ամսոյս 28ին
քննութիւնը եղաւ, քաջ հանդիսացաւ յամենայնի եւ
բժշկութեանը փառաւոր վկայագիրն (տիֆիոմ) սուած
դարձաւ վիրսովն ի Փարիզ, եւ նոն դարձեալ տարի մը
ամբողջ մէկ հիւանդանոցէ միւսը դիմելով անձանձիր
ախտատանօր գործնականին այ մեծ վարժութիւն ըրաւ,
որ բժշկի մը դժուարին ու փափուկ պաշտօնին մէջ
շատ անգամ տեսականնեն շատ աւելի նարկաւոր է :

Այս դժուարին ու բազմամիւղ արուեստն այսշափ
րիչ ժամանակի մէջ բազուրեամբ սովորելուն մեծ պատ-
ճառ, ու խրախոյս եղած է իրեն խր Վենեանն Բարե-
րարին լիշտառիլ, որ միշտ աչքին առջեւը կենդանի
մնալով սրտին ենանդը եւս բան զեւս կըբորբոքէր օր
մը առաջ ուսմունքը կատարելագործելով դառնալ իր
Բարերարին բովք՝ անձամբ անոր մասուցանելու
սրտին անկեղծ ու երախտագետ շնորհնակալութիւն-
ները : Այս սողերս զրած ժամանակինս անշուշտ ենք
որ երկութիւն այ իրենց վախճանին պատկումը տեսնելով
ուրախացած են. Բարերարը տեսնելով որ բարիք
ըրած անձը արժանի է եղէր իր բազմամեայ առաստա-
ձեռնութեանցն ու պաշտպանութեանը. բարերարեալն
այ տեսնելով իր Բարերարին սրտին բերկութիւնն
ու գոհութիւնը : Թող ազգն այ փուրայ երախտագետ
մտօր իր ուրախութիւնը անոնց ուրախութեանը խառ-
նելու, եւ միփարուի որ առաջին նայազգի ընտիր ու

մարտարարուեստ բժշկաց վրայ ուրիշ մըն այ աւել-
ցաւ. իր հիւանդներն ազգասիրաբար նոզացող, խնա-
մող ու առողջացնող՝ օտարաց շանասէր մեռին
ազատելով զանոնիր :

Տարակոյս չկայ որ Պ. Յովհաննեանին մարտարա-
րեամբն ու մարդասէր անդուլ խնամօրը մանուան
գոներէն ազատած բիւրառոր մարդիկ պիտի ցանկան
ու փափարին անոր Բարերարին անունը զիտնալ,
որպէս զի շնորհապարտ սրտիս անոր ազգօռուտ կենաց
երկարութիւնն յերկնից պաղատախտոն խնդրէն :
Անս այս գանձամիտ Բարերարն է Մեծապատիւ և
Ազգասէր Երամեան Կարապետ Ամիրայ Գարս Քեա-
նեա, եւ փուրանը ի դիմաց լրութեան Ազգիս մեր
խորին շնորհակալութեանց հաւատափրն իրեն մատու-
ցանել, եւ այն ոչ միայն Պ. Յովհաննեանին, այլ նաև
ուրիշ շատերուն համար որոնք իբրև մէկ մէկ անզին
պարզեներ այլ եւ այլ ժամանակընծայած է իր ազգին,
որոց մէջէն Պ. Յովհաննեան Թիւլյսիւզեանին անունը
տանք այս անգամ, որուն վրայ մօտերս գուցէ ա-
ռոփր այ ունենանք երկարօրէն խօսելու:

ԽԱՌԱՐՈՒՄՆ ԱՐԵԳԱԿԱԾ.

Մեպտեմբերի 18ին արեգակը մանեկաձեւ պիտի
խաւարի, բայց անտեսանելի յեւ րուպա : Աւստրա-
լիոյ հիւսիսակողմը, Պոոնելոյ, Սիամ և Պաղ-
տատ միայն պիտի տեսնուի :

ԱԽՍՏՐԻԱՅ ՄԷՋ ԿԵՐՈՒԱՆՅ ՁԵՐԻ ՄՄԻՆ ԶԱՓԲ.

Երեք տարիէ ի վեր Աւստրիոյ տէրութիւնը
հրաման տուած է որ ձիու միսն այ հասարակ
մսի պէս օրինաւոր կերպով վաճառուի. բացուած
տասուերկու մասվաճառանոցներու մէջ մինչեւ
հիմա 4,725 ձի մորբուած են, եւ անոնցմէ եղած
1,902,000 լիտր (746,535 քաշ) միսը 5,804,000
կտոր բաժնուերկով' այլ և այլ աղքատ ընտանեաց
վարձառուեր են :

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԵԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ԱՐԱՄԵԱՆ.